

Հավելված  
ՀՀ կառավարության 2010 թվականի  
հունիսի 24 -ի N 788 - Ն որոշման

«Հավելված N 3  
ՀՀ կառավարության 2008 թվականի  
դեկտեմբերի 18 -ի N 1563 - Ն որոշման

ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ՋՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ  
ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հաշվարկի մեթոդաբանությունը`

1) Սևանա լճի ակտիվ ջրատվության հաշվարկի մեթոդաբանությունը մշակելիս`  
ելակետային տվյալներ են հանդիսացել`

ա. մասնագիտացված գիտահետազոտական ինստիտուտների կողմից Սևանա լճի  
ջրաբանական ցուցանիշների բազմամյա ուսումնասիրությունների արդյունքները,

բ. հիդրոլոգիական, հիդրոմետրիկական և կլիմայական դիտարկումների բազմամյա  
տվյալները,

գ. լիճ տեղափոխվող ջրերի, լճի ջրի մակարդակի, լճի ջրի ջերմաստիճանի դիտար-  
կումների տվյալները,

դ. լճի մակարդակի հաշվարկային նիշը` 1899.70 մ, 2011թ. հունվարի 1-ի դրությամբ  
(2010 թ. մայիսի 25-ի դրությամբ լճի մակարդակի բացարձակ նիշը կազմել է 1899.87մ)։

2) հաշվարկի մեթոդաբանությունը մշակելիս` դիտարկվել են լճի մակարդակի վրա  
ազդող երեք հիմնական գործոնները`

ա. լճի ակտիվ ջրատվությունը,

բ. Արփա-Սևան թունելով լիճ տեղափոխվող ջրի ծավալը,

գ. ոռոգման նպատակով լճի ջրի բացթողումների տարեկան ծավալները.

3) հիմնվելով 1995-2009 թվականների ընթացքում լճի մակարդակի բարձրացման գործընթացի տվյալների վրա՝ լճի մակարդակի հետագա բարձրացման գործընթացն ընդունվում է 20 սմ ինտենսիվությամբ, որի դեպքում լճի մակարդակի բարձրացումը 3.8 մ մինչև հաշվարկային 1903.5 մ նիշը տեղի կունենա 19 տարիների ընթացքում:

4) Արփա-Սևան թունելով ջրի տեղափոխումը լիճ ընդունվել է 2011-2013 թթ., 140-160 մլն մ<sup>3</sup>, կապված թունելի վերականգնողական աշխատանքների հետ, իսկ հաջորդ տարիներին նախագծային հզորությունը՝ 250 մլն մ<sup>3</sup>:

5) ոռոգման նպատակով ջրի բացթողումն առաջին հինգ տարիներին (2011-2013 թթ.) նախատեսվում է 150 մլն մ<sup>3</sup>, իսկ հետագա տարիներին՝ ոռոգելի հողերի ընդլայնման հետ կապված, ընդունվել է 170 մլն մ<sup>3</sup>:

6) համաձայն հաշվարկի, լիճ մուտք գործող ջրի ծավալը 19 տարիների ընթացքում կկազմի 8430 մլն մ<sup>3</sup>, ոռոգման նպատակով բաց կթողնվի 3170 մլն մ<sup>3</sup> և մակարդակի նիշը կհասցվի 1903.5 մ և լճի ծավալը կավելանա 5260 մլն մ<sup>3</sup> - ուլ:

7) աղյուսակում լճի մակարդակի բարձրացման բոլոր ցուցանիշները հաշվարկային են և ենթակա են եռամյա ճշգրտման՝ կապված լճի ջրատվության և այլ ցուցանիշների փաստացի տվյալներից, հաշվի առած 1.5 մ ալիքի ազդեցության գոտին:

ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ՋՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ (հաշվարկային)

Տարեթվերը	Լճի ջրի մակարդակի ծրագրավորվող բարձրացում (մետր)	Լճի ջրի մակարդակի բարձրացման համար պահանջվող ջրի ծավալը (մլն մ <sup>3</sup> )	Լճի ակտիվ ջրատվությունը (մլն մ <sup>3</sup> )	Արփա-Սևան թունելով լիճ տեղափոխվող ջրի ծավալը (մլն մ <sup>3</sup> )	Ընդամենը լիճ մուտք գործող ջրի ծավալը (4+5) (մլն մ <sup>3</sup> )	Ոռոգման նպատակով լճից բաց թողնվող ջրի ծավալը (մլն մ <sup>3</sup> )	Ջրածածկման նիշը՝ հաշվի առած 1.5մ ալիքի բարձրությունը (մետր)
1	2	3	4	5	6	7	8
2011	0.2	255	245	160	405	150	1901.4

1	2	3	4	5	6	7	8
2012	0.2	255	245	160	405	150	1901.6
2013	0.2	255	245	160	405	150	1901.8
2014	0.2	315	235	250	485	170	1902.0
2015	0.2	305	225	250	475	170	1902.2
2016	0.2	300	220	250	470	170	1902.4
2017	0.2	300	220	250	470	170	1902.6
2018	0.2	295	215	250	465	170	1902.8
2019	0.2	290	210	250	460	170	1903.0
2020	0.2	285	205	250	455	170	1903.2
2021	0.2	285	205	250	455	170	1903.4
2022	0.2	280	200	250	450	170	1903.6
2023	0.2	280	200	250	450	170	1903.8
2024	0.2	270	190	250	440	170	1904.0
2025	0.2	270	190	250	440	170	1904.2
2026	0.2	260	180	250	430	170	1904.4
2027	0.2	260	180	250	430	170	1904.6
2028	0.2	250	170	250	420	170	1904.8
2029	0.2	250	170	250	420	170	1905.0
Ընդամենը	3.8	5260	3950	4480	8430	3170	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ